# Հրազենային բռնությունն արգելող դատական հրամաններ

REDUCE THE RISK
Gun Violence Protection Orders | Save Lives

## Գործողություններ ձեռնարկեք զենքի բռնության դեմ

**Եթե դուք անմիջական վտանգի տակ եք, զանգահարեք 911:**

2020 թվականին Կալիֆորնիայում զենքով մահերի կեսը սպանություններ էին: Գրեթե կեսը՝ ինքնասպանություններ: Այս խնդրի կանխարգելման համար Կալիֆորնիայում գործում են ինը տեսակ անվտանգությունն ապահովող հրամաններ, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ հրազենային բռնությունը կանխելու և հոգեկան ճգնաժամի մեջ գտնվող անձանց աջակցություն ցուցաբերելու նպատակով:

## GVRO-ի ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԲ Է ԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

Եթե որևէ մեկին կարող է վնաս հասցվել հրազենի կիրառմամբ:

### ՈՎ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ

- Ոստիկաններ
- Մոտ ընտանիքի անդամներ
- Ամուսին, կին, զուգընկեր կամ սենյակակից
- Ղեկավար կամ գործընկեր
- Ուսուցիչ այդ անձի դպրոցից

### ՀՐԱՄԱՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

21 օր, կարող է երկարաձգվել 1-ից մինչև 5 տարի:



## Ի՞նչ է սա:

**GVRO**-ն Կալիֆորնիայի անվտանգությունն ապահովող հրաման է: Այն թույլ է տալիս ընտանիքի անդամներին, ուսուցիչներին կամ ոստիկանությանը դիմել դատարանին օգնության համար, եթե ինչ-որ մեկը կարող է վնասել ինքն իրեն կամ ուրիշներին: Եթե դատավորը համաձայնվի, տվյալ անձի զենքերը ժամանակավորապես առգրավում են, որպեսզի ապահովվի բոլորի անվտանգությունը:

## Ում է այն պաշտպանում

**GVRO**-ն օգնում է բոլորին մնալ անվտանգ: Այն մարդկանց տալիս է ժամանակ կանգ առնել և օգնություն ստանալ, եթե նրանք կարող են վնասել իրենց կամ ուրիշներին: Այն կարող է նաև կանխել ինքնասպանությունը:





## Ինչպես է այն օգնում

**GVRO**-ն կարճ ժամանակով վերցնում է անձի զենքերը, որպեսզի նա կարողանա կանգ առնել և օգնություն ստանալ: Այդ անձին թույլ չի տրվում ունենալ կամ գնել զենքեր, փամփուշտներ կամ փամփուշտակալներ մինչև հրամանի ավարտը:

**4X** Ատրճանակ ունեցող մարդիկ գրեթե մի քանի անգամ ավելի հավանական է, որ ինքնասպան լինեն, քան նրանք, ովքեր զենք չունեն:

**Սկանավորեք այստեղ՝ ավելին իմանալու անվտանգությունն ապահովող հրամաններից և հրազենի բռնությունը նվազեցնելու միջոցների մասին:**

**ReducetheRisk.ca.gov**